

**««ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածը լրացնել 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ .

«5. Պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են նաև համայնքների բյուջեներին հատկացնել անվերադարձ կարգով տրվող մասհանումներ՝ յուրաքանչյուր ռոյալթի վճարողի կողմից օրենքով սահմանված չափով և կարգով յուրաքանչյուր հաշվետու տարում պետական բյուջե հաշվարկված ռոյալթի չափի երկու տոկոսից (այսուհետ՝ համայնքային ռոյալթի): Սույն հոդվածի իմաստով ռոյալթի վճարող է համարվում Հայաստանի Հանրապետության հարկային **օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ռոյալթի վճարողները:**

6. Համայնքային ռոյալթին բաշխվում է համայնքների բյուջեների երկաստիճան համակարգով՝ ըստ հետևյալ բանաձևերի.

$$Ռ^{ագդ.} = Ռ^h \times 50\%$$

որտեղ՝

$\mathbf{\text{Ռ}^{ագդ.}}$  – տվյալ ռոյալթի վճարողի կողմից շահագործվող հանք(եր)ի ազդակիր համայնք(ներ)ին հավասարապես բաշխման ենթակա ընդհանուր ռոյալթի չափ

$\mathbf{\text{Ռ}^h}$  - համայնքային ռոյալթի տոկոսային չափ (2%):

$$\Gamma^{\text{այլ } h} = \Gamma^h \times 50\%$$

որտեղ՝

$\Gamma^{\text{այլ } h}$  - ընդհանուր վերցրած՝ Հայաստանի Հանրապետությունում ռոյալթի վճարողների կողմից շահագործվող հանք(եր)ի ագդակիր համայնք(ներ)ին հավասարաչափ բաշխման ենթակա ռոյալթի չափ

$\Gamma^h$  - համայնքային ռոյալթի տոկոսային չափ (2%)

Մասհանումների չափերը որոշվում են՝ ելնելով սույն հոդվածում նշված համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ տարվա արդյունքներով պետական բյուջե վճարման ենթակա հաշվեգրված ռոյալթի հանրագումարից:

7. Բաշխված համայնքային ռոյալթի գումարը կարող է ծախսվել այն ուղղություններով, որոնք սահմանվում են կառավարության կողմից՝ բացառելով :

8. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված բանաձևերով համայնքներին բաշխված համայնքային ռոյալթները հանդիսանում են համայնքային բյուջեներին անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ:»:

**Հոդված 2.** Օրենքի 28<sup>1</sup>-րդ հոդվածի 1.1 մասի բ) կետում «չափերով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով սահմանված կարգով համայնքներին բաշխվող համայնքային ռոյալթների» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել 3<sup>1</sup> մասով հետևյալ բովանդակությամբ.

«3<sup>1</sup>. ՀՀ կառավարության որոշմամբ կարող է սահմանվել սույն օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային ռոյալթի ծախսերի մասով հաշվետվության առանձին ձևաչափ:»

**Հոդված 4.** Օրենքի 36-րդ հոդվածի գ) կետում «կայքում,» բառից հետո լրացնել «իսկ սույն օրենքի 20-րդ հոդվածով համայնքներին բաշխված համայնքային ռոյալթի ծախսերի մասով հաշվետվությունը առանձին հրապարակվում է տվյալ համայնքի և/կամ մարզի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ,» բառերով:

## **Հոդված 5.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ին:
2. Կառավարությունը սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված որոշումն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

**Ա ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

#### **«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 86-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի դ. ենթակետում «վճարներից» բառից հետո լրացնել «և ռոյալթիներից» բառերով:

**Հոդված 2.** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասի 5) կետից հետո ավելացնել 5.1 կետ հետևյալ բովանդակությամբ՝

«5.1 Հաստատում է ռոյալթիներից գոյացած գումարների ծախսման ծրագրերը և վերահսկում դրանց իրականացումը»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՍԱՐԳՍՅԱՆ

Ա